



ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԵՎՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏ ԿԱՐՊԻՍՅԱՆ

Գ Ր Ի Գ Ո Ր Տ Ա Թ Ե Վ Ա Ց Ի *

Ե Ր Կ Ե Ր Ը

Գրիգոր Տաթևացիի համբավը մեծ եղած է ոչ միայն իր սրբակրոն վարքով, ուստիշական-մավանվարժական գործունեությամբ, այլ նաև մատենագրական վաստակով:

Ան գրած է բազմաթիվ աշխատություններ, որոնցմեն շատերը տակամին կկարուին խոր և սիստեմատիկ ուսումնասիրության: Իր աշակերտը՝ Թովմա Մեծոփեցին, անոր մասին կգրե. Ժարդապահետն ամենայն հայոց, երկրորդ լուսաւորիչն և աստուածաբանն՝ գեր ի վերոյ գոլով ամենայն իմաստասիրաց և վարդապահետաց հնոց և նորոց²³: Ել այս ձրի վերագրում մը չէ: Եվ իրապես Հին և Նոր Կտակարաններու, կրոնական երկերու գիտութեննեն զատ, Տաթևացին ուսումնասիրած էր նաև իմաստասիրական և արտաքին աշխարհիկ գիտությունները, որոնցմով զինված՝ ան մեծ հմտությամբ վարդապահեներ պատրաստեց Հայ Եկեղեցվո համար և պայքար մղեց ունիթոռական շարժման դեմ, հանդիսանալով ջերմ պաշտպանը Հայ Եկեղեցվո ուղղափառության, խոսելու, գործելու և առաջնորդելու միջտ պատրաստ:

* Շարունակված «Էջմիածին», ամսագրի 1959 թվականի № Գ-ից:

²³ Թովմա Մեծոփեցի, «Պատմութիւն», էջ 50:

Գրիգոր Տաթևացիի աշխատասիրությունները հետևյալներն են.

1. «Նորին Գրիգորի [Տաթևացւոյ] աշակերտի, Համառու տեսութիւն ի Գիրս Պորփիրի»: Տպված 1793-ին, Մադրաս:

2. «Եռամեծին Յովհաննու հայոց փիլիսոփայի և վարդապետի, Համառու աշակերտէի, Վերլուծութեան Ստորոգութեանցն Արիստոտէլի, աշխատասիրեալ ի Գրիգորէ աշակերտէ»:

3. «Նորին Յովհաննու Որոտնեցւոյ, Համառու լուծմունք Պերի Արմենիասի գրոցն, Համաքեալ ի Գրիգորէ աշակերտէ»:

4. «Նորին Գրիգորի աշակերտի Յովհաննու Մեծի, Համառու լուծումն Առաքինութեանցն Արիստոտէլի»:

5. «Նորին Գրիգորի, Լուծումն Համառու ի խրատ գրչութեան Փէղրգեայ վարդապետի, զոր նախ խնդրեալ էր Կոստանդիոյ գրչի և ապա Գոյներիցանց Ստեփանոսի», գրված 1408-ին Մեծոփա վանքին մեջ:

6. «Նորին Գրիգորի աշակերտի Յովհաննու Որոտնեցւոյ, Լուծումն Համառու դուարիմաց բանից ի գիրս գրչութեան որոյ Արիստոկիսի հոեստորէ», գրված 1408—1409-ին Մեծոփա վանքին մեջ: Վերլուծական աշխատանք մըն է:

7. «Ասկեղորիկ, Հարցումն խօճայ Մասուդայի և պատասխանիք Գրիգորի»:

8. «Նորին Գրիգորի [Տաթևացոյ], Դաւանովին հաւատոյ շորեթասան աստիճանաւ, զոր ժողովեալ այսպէս դաւանիմք հասարակ բանիւ և համառօտ բանիւ, կամ՝ «Յաղագս դաւագան տալոյ»:

9. «Գրիգորի աշակերտի Յոհաննու և ուամեծի աշխատասիրեալ, ի լուծումն պարապմանց սրբոյն Կիրոլի, ի խնդրոյ ումեմն բանսահրի Գէորգեալ նորին հարազատի», գրուած 1391-ին: «Պարապմանց» կոչվի այս գիրքը, որովհետև հերձվածներու բոլոր հորցումներուն սպառիւ և անթերի պատասխաններով կպարապի:

10. «Սահմանադրութիւն դաստիարակութեան նորածնելոց մանկանց, որք հրափրելոց իցեն յաստիճան քահանայութեան: Կղատք հարկատրք և պիտանիք, արարեալ մեծի վարժապետին Գրիգորի Հոետորին» (տե՛ս «Մաշտոց Զեռնադրութեան», էջ 1—53):

11. «Գիրք Հարցմանց»:

12. «Բնդդէմ Տաճկաց», որ «Գիրք Հարցմանց»-ի ամբողջական մեկ գուփն է, տպագործյան ատեն գուրս ձգված:

13. «Գիրք փոքր Հարցմանց ի խնդրոյ Գէորգեալ Երգնկացոյ», գրված 1387-ին:

14. «Թուղթ Գրիգորի Տաթևացոյ առ Կաթողիկոսն ի Կիլիկիա»:

15. «Արձակմանն աղօթք, արարեալ մեծի րաբունապետին Գրիգորի»:

16. «Դաւանութիւն Հաւատոյ, Քարոզագիրք»: Կրաղկանայ Երկու Հատորների, ա. «Ամարան», բ. «Չմերան»,

17. «Վան Աթոռոյն Աղթամարայ»:

18. «Մեկնութիւն գովեստից, տօնից տէրունականաց, ի պատիւ սրբոց, ի պատճառ գիտութեան տիմսարաց, մանաւանդ ի յաղթիւս արտասուաց՝ անձանց թափսեալ, յաէտ ի ճշմարտութիւն կարգաց ուղղափառադ, ի յեղծումն բարբանջմանց շարափառաց»:

19. «Վասն կազմութեան մարդոյ»: Տաթևացին այս Հատորին մեջ կիսուի մարդու ծագման մասին: Կառաջադրեալ այն տեսակետը, որ ստեղծագործությունը անկատարեն դեպի կատարյալը գացած է. այսպէս, ո՞նախ գոյացած է ավելի անկատարը՝ տնկականը (բուլար), հետո զգայականը (կենդանին) և ապա բանականը (մարդը), ըստ որում ամեն ինչ կզարդանա անկատարեն դեպի կատարյալը: Սերմի նյութի մեջ Արարդի հրամանով գոյացած է պազմողական զորովյունը»:

Տաթևացին ոնի նաև բազմաթիվ լուծմունքներ և մեկնություններ այսպէս՝

20. «Ալուծմունք արտաքին Գրոց Գրիգորի Տաթևացոյ»:

21. «Ալուծմունք Յորայ կամ Համառօտ լուծմունք գիտարիմաց բանից ի մեկնութիւն

գրոց Յորայ և ի բանս մեկնաց», որու հորինման մասին հեղինակը հետեւյալը կգրե. «Ի վաղոց հետու փափաքէի բոլոր մեկնութեան Յորայ. և ի թուականութեանս Հայոց Պահ (1408) ամի, եկեալ մեր յերկիրս Քաջբերունի, և ձմերեալ ի հրեշտակարնակ վանս Մեծոփայ, ի սպասու դամբարանաց վարդապետացն սրբոց և ընթերցմանց, Հաւաքեցի զդուարալոյժ բանս Յորայ, և զմեկնողաց նորա, և այլ սակաւ ինչ լուծումն Արիստակէսի և Գէորգայ ի խրատս գրչութեան, ընդ նմին և զքաղուածոյ մեկնութեան Յովհաննու Ամետարանչի, և ընծայեցի ի պատիւ սուրբ տեղոյս ուսամնասէր անձանց»:

22. «Գրիգորի Լուծմունք Համառօտ ի տեսովին Դամի Ներգինացոյ, ազգաւ հայ, իմաստովիամբ հելլենացի»:

23. «Ալուծմունք Աւետարանի Մատթէոսի»:

24. Նորին Գրիգորի [Տաթևացոյ] Լուծումն համառօտ ի տեսովին Դամի, կամ՝ «Ալուծմունք գիտարիմաց բանից և քաղուածոյ Սաղմոսացն Դամի», որու Հորինման մասին հետեւյալ տեղեկությունը կուտա. «Հաւաքեցի... ի նեղ ի ստորասուզեալ ժամանակի, որում բռնակալն Թամուր, թոյլտուութեամբ վերին խնամոց, տիրեալ բազում աշխարհի և աւերեալ և կործանեալ յայսմ ամի Պահ (1405) թուի: Եւ պատճառ շարժութեան (շարժառիթ) վերստին քաղուածոյս՝ նախ մեծին Վարդանայ համառօտ և խորին տեսութիւն, որ անյայտ մնար միշտ, հոգացայ յայտնի և ընդ արձակ ցուցանել: Երկրորդ զի զառաշին քաղուածոյն կարի կարճ և պակաս թուէր»²⁴:

25. «Թաղուածոյ մեկնութիւնք «Առակաց» և «Երգ Երգոցի»:

26. «Թաղուածոյ մեկնութիւն Մատթէոսի Աւետարանի»: (6 Հատոր), ուրի հեղինակը հիշված է, «Զուարթուն... աշակերտ Յովհաննու Որոտնեցոյն»:

27. «Թաղուածոյ մեկնութիւն Յովհաննու Աւետարանին»:

28. «Մաղկաբաղ մեկնութիւն Եսայեալ, ի լուսաւոր բանից տեսան իմոյ և վարժապետին Յովհաննու Որոտնեցոյն»:

Ինչպես կերպի այս թվումնեն, կրոնական ամբողջ մատենադարան մըն է Տաթևացիի երկասիրությունը: Մեկիկ-մեկիկ ներկայացնել անոնցմե յուրաքանչյուրը՝ տարին երու աշխատանքի և խոր ուսումնասիրության կկարոտի: Պիտի շանանք ավելի մոտեն ծանոթանալու «Թարողագիրք»-ին և «Գիրք Հարմանց»-ին, որ իր վուփու-գործոցն է: Բայց նախ Երկու խոսք ուսկեփորիկին մասին, որ աստվածաբանական հավաքածո մըն է:

24 «Նորին Գրիգորի Հայոց», էջ 23—24:

«Ոսկեփորիկ» կամ «Հարցումն խօճայ Մասուղայի և պատասխանիք Գրիգորի» հավաքված է 1383-ին, և կրաղկանա չորս հատորներու Այդ առթիվ հեղինակը հետեւ յալ տեղեկությունը կուտա. «Հաւաքեցի զգիրս Աստուածաբանութեան, որ անուանեալ կոչի Ոսկեփորիկ: Արդ՝ գրեցա սա ըստ հովանեաւ Ա. Առաքելոցս, Առաքելական Աթոռոյն Եւստաթէի, և այլ բազմահաւաք սրբութեանց, ի ներ և ի նուաղեալ ժամանակի, Թուականութեան մերոյ աղջի Պահանջերորդի (1407): Ի խնդրոյ ումեմն բարեպաշտ խօճայ Մասուղայի, բնակութեամբ ի սեպուշ արանց Դաւրէ քաղաքի: Զոր խնդրեաց բազում անդամ գրով և բանի, գրել յաղագս Սրբոյ Երրորդութեան և յաղագս Քրիստոսի աստուածութեան: Եւ ես տկարս ոգուլ և ծիրեալս մարմնով՝ գրեցի և հաւաքեցի ի սրբոց զմշմարիտն և զուղիղն կարճառու բանիք, և ի շորս հատոր բաժանեցի վասն դիկութեան ընթերցողաց»²⁵:

Գրքի անվան մասին կորե ուրիշ տեղ մը, «որ անուանեալ կոչի Ոսկեփորիկ», զի ըստ իրին և զանունն եղեալ ունի, ոսկի՝ այսինքն անապական և պատուական գանձիւր աստուածային առլցեալ, որ և զստացաւ իւր և զսիրոլ իւր և զսիրոլս աստուածութեամբ փարթամացուցան»²⁶:

«Ոսկեփորիկ»-ի բովանդակությունը Ա. Երրորդության և Քրիստոսի աստվածության մասին է: Հեղինակը զանոնք հավաքած է զանազան հեղինակներու գրվածքներն:

«Ոսկեփորիկ» թիվ 5118 ձեռագիր օրինակին մեջ Ուստակես Սեբաստացի կորե.

«Գանձս այս բազմալեզոնն
Եւ մարգարիտ պատուելագոյն,
Յանձնական ծովէ հոգոյն,
Պարգև տուաւ մեղ ի վեհոյն,
Յեռամեծէ բարունյն...»:

Տաթևացու մյուս կարևոր գործն է՝ «Գանձնութիւն հաւատոյ, Քարոզագիր», որ ավարտած է 1407-ին: Գիրքը կրաղկանա երկու հատորներեւ՝ Զմերան և Ամարան: Առաջին հատորը կը լուսպարկե Ծնունդին մինչև Հոգեգալուստ և կապարունակե 184 քարոզները: իսկ Երկրորդը՝ Հոգեգալուստն մինչև Ավագ տոնները և կապարունակե 160 քարոզները:

«Աստուածահաճոյ», «Հոգեզարդ» և «Քաղազնորհ» վարդապետին այս գործը կոչված է «Շոգեբուխ» և աստուածախոս մատեան: Իր քարոզներով ան հանդիսացավ մեծագույն պաշտպանը Հայաստանյաց Եկեղեցւով, պայքարեցավ կորովով և գիտությամբ

25 «Նոտարք հայոց», էջ 27:

26 Լ. Ս. Խաչիկյան, «Ժ գարքագրեալ հիշատակարաններ», Երևան, 1955, էջ 10:

ունիթոռներու ոտնձգությանց գեմ և պաշտպանեցած Հայ Եկեղեցվոր դավանանքը խոսքով և գրչով: Ինք ըլլալով «քաջ հոնտոր» և «աստվածաբան վարդապետ», զարկ տվալ Հոնտորական քարոզչական արվեստին և ճիխացուց վարդապետական տեսությունները և հասցուց բարդապետական տեսությունները:

Քարոզագրքի մասին Տաթևացին երեք պատճառ կթվե: «Նախ՝ հարկեցեալ յեղարց համաշունչ աշակերտաց. Երկրորդ՝ զի ու գոյր գիրք քարոզաց մերս վարդապետաց, բայց միայն խորին ասացուածք, և երրորդ պատճառ, զի ես տարտամ հոգով և ծոյլ մարմնով ոչ կարացի բազմաց քարոզել, վասն որոյ հնարեցայ զգիրս քարոզաց, զի և ինձ մասն լիցի ընդ ձեզ բարեցց»²⁷:

Տաթևացին նշանավոր քարոզները մը եղած է: Հաճախ ան իր քարոզները արարերեն լեզվով ալ խոսած է, և պարզաբանած, թէ Քրիստոս որպես Աստված քարոզած է և պալազիներեն շատեր հավատացած և մկրտված են: Տաթևացիի քարոզները այնքան խոր տպավորություն ծգած էին տաթևացիներուն վրա, որ հետագային գիտակցաբար բազմաթիվ նահատակվողներ եղան իրենց կյանքին և Եկեղեցիին համար: Տեղին է հու մեջ բերել Տաթևի ժողովրդական ասացվածքը. «Հույսը կուսաւորչի հաւատին, վայ» ուրացող մարդին»²⁸:

Տաթևացիի Քարոզագրքը շատերու համար դարձավ օգտագործելի աղյուր և գասագիրք քարոզության, հոնտորական արվեստի: Զեռագիրներու մեջ շատ բարձր կգնահատվի անոր արժեքը: 1425-ին ընդօրինակված Քարոզագրքի ձեռագրե մը կմեջը երեսն հետեւալ հատվածը, որ Ստեփանոս ստացողին հիշատակարանն է.

«Զի և ես վաղուց [է] ի ցանկացեալ
Եւ սուրբ գրոց կարօտ մնացեալ,
Տէրն իմ Յիսուս յիս զթացեալ

27 Լ. Ս. Խաչիկյան, «Ժշված աշխատությունը», էջ 72:

28 Գավիթ բեկ երբ կուպար Մյունլաց երկիրը ազատելու համար օտարներեն, 1722-ին, Գավիթ անունով մեկը, որ մելքն էր Տաթևի, ուրացած էր Գրիգոր Լուսալորժի հավատքը և Բարդի կողմենը, հավատարիմն էր պարսից կուսակալին, տաթևացիները զինելով կամրացներ գյուղը՝ Դավիթ բեկի գեմ հանելու համար: Մակայն Դավիթ բեկ հանկարծակի կուգա կգրավե և կպաշարե ամբողջ Տաթևը, «և յետ երկուց աւորց զուամբը ածէր և զնա և զամենայն ինչս նորա կաթեալ ի Շէնհայր ածէր, և զրամայէր նմա զաւուր երկուաման ի մէջ Եկեղեցւոյն յանդիման ամենեցուն ասել բարձր ձայնի զառածն զար ուամկաց թէ, ուղան կուսաւորչի հաւատոյն, վայ՝ ուրացող մարդին», ապա հատանէ զգիրս նորա, և ինքն երթայ բնակի ի Տաթև (Ալիշան, «Միսական», էջ 224):

Եւ զիմ փափաքս կատարեալ,
Տեսի Սովոր Գիրքս զարդարեալ
Անգին ակամբ մարդարտաշար,
Աղութ, զմրուխտ և ակն գօհար,
Լոյս համասփիռ և կառավար,
Մա բուրաստան արփիափայլ.
Անմահական պտղօք լցեալ,
Ի Սովոր Հոգույն շնորհիւ լցեալ՝
Անմահական հոտ մեզ բուրեալ,
Մարգարէիւքն է հաստատեալ
·Ի առաքելօքն է ամրացեալ,
Հայրապետացն է ճոխարառ
Եւ բարունեացն ջահ ի վառ:
Իմաստասէրքն են զարմացեալ,
Թէ անշափ շնորհըն, ոլր ասս հեղեալ,
Հերձուածողքն են կարկամեալ
Եւ բանսարկուն տարէկուսեալ²⁹:

1424-ին գլուխ այլ ձեռագիր մը մեջ
կկարդանք.

«Բանքս այս քաղցր, խորիսխ մեղուի,
Ի քիմս ուղիղ դամանլողի,
Խոկ սայ սրեալ սուր երկսայրի
Ընդդէմ ամէն հերձուածողի,
Որ ազգ ազգ հերձիք ի Տէր խօսի,
Նայ և կարկիչ պիղծ բերանի
Եւ բառաքար ի ճակատի՝
Որք հաւանին քաղկեդոնի
Եւ հայշոյողք են Քրիստոսի»³⁰,

Անշուշտ բնավ զարմանալի չէ, թե ինչ
չո՞ւ Միիթարյաններ երբեք չեն հիշատակած
Գրիգոր Տաթևացիի անունը (տե՛ս Զարքհանելյան, «Պատմութիւն հայ հին դպրութեան»):

«Գիրք Հարցմանց»-են վերջ Գրիգոր
Տաթևացիի երկրորդ մեծ աշխատությունն է
«Քարոզագիրք»-ը: Երբեմն մեզ բերված են
նաև ուրիշներու քարոզները: Վերնագիրներուն մեզ դրված են ընորին և յայլմէ», ոգի
յատկասցին ի միհեանց, և մի՛ գողացեալ
թուեցին տիմարաց մտաց: Այս քարոզները, ընդհանրապես քարոյակրթական և
ուսուցողական ուղղությամբ են: Տաթևացին
կիսուի սիրո, խոհեմության, արիության,
աշխատասիրության, ծույլերու, անհոգներու,
երկրագործներու, «Հալալ ամունութեան»,
«վասն արդար վաճառաց և կշռոց, եկեղեց-
վո խորհուրդներու և այլ նյութերու մասին»:

«Տաթևացու «Քարոզ»-ը, որ իբրև տեսակ
փխարինել է հին ճառա-ին, աներբո-
ղեան»-ին, շոնի վերջիններիս պերճ ու պա-
ճուճած եռանդալից ձեզ, ընդհանրապես
սառն ու ցամաք է, պարզուկ ու հասարակ,
խոսված լեզվին մոտ, բայց ոչ միշտն հայե-
րենով: Իշխող տոնն է հանգիստ սովորեցնող

²⁹ Ա. Ս. Խաչիկյան, «Հայոց հին գրականության
պատմություն», Երևան, 1946, թ հատ., էջ 364:

346—347:

³⁰ Անդ, էջ 318—319.

ուսուցչի, որ տալիս է լուրջ բացատրություններ. ազատ չէ սխոլաստիկ ձևերից, թվար-
կություններից և մեկնություններից, ո-
րոնք իր ժամանակի մարդկանց հա-
մար անհրաժեշտ ու հաճելի են եղել: Առա-
քել Սյունեցին շափազանց գովելով իր «մեծ
վարդապետ» Գրիգորին՝ անվանում է
նրան ամեն հոետոր», «քաջ հոետոր», «հոգե-
շարժ լեզվի» տեր: Անշուշտ, նա իր բերանա-
ցի քարոզների մեջ ավելի հոետորական
շնորհք է ցուց տվիլ, քան գրավորների մեջ:
Հովհաննես Որոտնեցու թաղման ժամանակ
ասած նրա ներբողյանը իսկապես հարուստ
է ճարտասանական ձևերով—հարցում, բա-
ցականշություն, կրնություն նման կազմու-
թյամբ խոսքերի և այլն. կան նաև պատկե-
րավոր և առատարան արտահայտություններ
առանց ճոռոմության, տրտմագին զգացմուն-
քով և անկեղծ սիրով լի մի գեղեցիկ ներբո-
ղեան, Սովոր Գրիգոր առած նմանություննե-
րով մի երախտագիտական գովեստ արժա-
նավոր գործշին³¹:

Տաթևացիի քարոզագրքերու հետապնդած
նպատակը գործնական, ուսուցողական և
դաստիարակչական եղած է: Նույն նպատա-
կին համար հորինած է ան իր մյուս աշխա-
տությունները, այսինքն՝ «Արիստոտէլի գրոց
լուծմունս, զՄատորութեանցն, զՊերի
Արմէնիասին, և զԱռաքինութեանցն, նաև
զՊորփիրին, զՊարապամանց լուծմունքն,
զՍաղմոսի քաղուածուն, զԱռակաց քաղուա-
ծուն, զլուծմունքն Արիստակիսի, և Գէորգայ
գրութեաննն..., զՔաղուածուն Մատթէոսի
Աւետարանին, և զԵսայեալ քաղուածուն, և
զԱսկեփորիկն» և այլն:

«Գիրք հարցմանց»-ի հիշատակարանը³².—
«Արդ՝ ես վերջին ծնունդս Եկեղեցոյ և տրուպս
բանասիրաց, Գրիգոր պիտակ անուն խնդրող
բանին. բացայայտեցի դրանս հարցմանց ի
լուսաւոր բանից վարդապետաց Եկեղեցոյ:
Ի խնդրոյ ումեմն բանասիրի Ատոմի ուղղա-
փառի: Որ ի վաղուց հետէ բազումս թախան-
ձէր: Եւ վասն իմոյ տկարութեան և ժամա-
նակիս վրդովման զինդիրն յապաղէի: Եւ
ապա ի սէր անձուկ ժուկոյ նորին, ապաս-
տանեալ ի նոյն որ զօրացոյց գտկարս, ձեռն
ի գործ արկեալ աւարտեցաւ բազում միջո-
ցաւ. և փախստեամբ ի տեղիս. և մեծ շանի
փոփացեալ:

Որ և ո՛չ ժամանեաց ի կատար բանիս վե-
րոյ ասացեալ խնդրողն, Այլ ի հասարակ
գրոյս՝ հասարակեաց և նա զկեանս առօ-
րեալ հասեալ ի գանձ իմաստից և յաղրիկն

³¹ Սահմանական, «Հայոց հին գրականության
պատմություն», Երևան, 1946, թ հատ., էջ 364:

³² Գրիգոր Տաթևացի, «Գիրք հարցմանց», Կոս-
տանդուապոլիս, 1729, պրակ ԽԵ.

գիտութեանց: Որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի ամէն:

Ա'րդ՝ եղեւ զրաւ բանիս, ի շրջագայութեան Հայկազեան տօմարի, Պիծ³³ թուի: Ընդ հովանեաւ, երկնահանգէտ մեծարգոյ ուխտի Միմեաց նահանգի:

Առաքելական Աթոռոյս սուրբ առաքելոյս, և այլ շրջակայ հրեշտակարնակ սուրբ մենաստանեաց: Որոց խնամօք ամրացեալ փրկեցուք յամենայն փորձութեանց ամէն: Իսկ լուծումն հարցմանց այսոցիկ, ոչ ամենկին օտարաձայն աւելորդս խուզեալ. և ո՛չ գեղջուկ իմն աշխարհական խօսից յարմարեալ: Այլ զիտանիս եկեղեցոյ և վարդապետաց ոգեշահ խնդիր հասատոյ միայն հոգատարեալ: Ուղղակի ճշգրտութեան և անըստգիտ իմացման: Բովանդակեալ ոչ զամենայն որ ամենեցունց է գիտելի: այլ զրանս բազումս որ բազմաց է պիտանի և խնդրելի:

Ա'րդ՝ է՛ ինչ ի սմա հաւաքեալ ի լուսաւոր րանից վարդապետաց սրբոց ըստ գրոյն կամ իմացուածոյն: Եւ է՛ ինչ ի ներգործութեանց Հոգոյն Աստուծոյ շնորհաց. որ ծածկէ յիմաստնոց և յայտնէ տղայոց յիւրաքանչիւր ժամանակս ըստ կամաց իկրոց: Եւ թէ այս և թէ այն, ուր ընկալ վիճողի մտաց քոց առանց ամենայն երկրայութեանց. իբր ի միոյ կենեղուտ աղբերէ կենաց ուռծալրացեալ և պտղաւէտեալ: ի փառս և ի գովեստ նորին տնկագործի և առաջնորդի:

Զոր և ես գօրէն մշակաց բազմահաւաք պտղոց. կամ փունց մի անուշահոտ բազմերանք ծաղկանց. կամ չնշին թոշնոյ զխորիսխ մեղու կամ որպէս զլումայս ալրույն տառապեալ գոյիւ:

Աղերս ընծայեցի և գանձանակ ճոխութեան ձերդ մեծութեան. իմաստասէր և ճշգմարտասէր եկեղեցոյդ Հայաստանեաց և ընթերցասէրդ մտաց:

Որ և աղաշեմ զբարեմիտ հանդիպողսդ՝ եղայրական սիրով հաւանիլ, զպակասն լնով և զաւելիսն կշռել: Եւ պիտանեացն՝ փառս վերընծայել այնմ, որ փառաւորեան է ի պարգևս իւր: Իսկ զանպիտանսն ներել մերայ փոքր ընկալ անօթոյ և դանդաղկոտ փութոյ:

Դարձեալ, յերեսս անկեալ արտասուալի դիմօք. հոլս և փոշի՝ սուրբ գարշապարաց ձերոց, աղերսեմ ի խորոց սրտէ զհարաղատ գութ: Հարց և եղայր հոգմորաց: Զի կաթ մի արտասուաց ի կաթիլ դուզէ ձե՛րդ մաղթանաց ցողեսցի ի գերեզման հոգոյ իմ տառապանաց:

³³ Պիծ=846. 846 + 551 = 1397. ուրեմն «Գրք Հարցմանց»-ը դրամ է 1397-ին:

Եւ լուսացէ զբազմաշարաւ զազրացեալ ոսկերս՝ մեղօք մեռելոյս: Զի թերես վասն ձեր սիրալիր մաղթանացդ գտայց ողորմութիւն յամէնողորմ Փրկչէն մերմէ:

Այլ և վարժապետին իմոյ և մեծ հսետուրին հայոց Յովհաննու Որոտնեցույ, եղիցի ի սմա յիշատակ մաղթանաց մասին օրհնութեան. և վիճակ ժառանգութեան սրբոցն ի լուս: Զի նա՛ ծնաւ զմեղ ըստ բանի՝ բազմաշան երկօք, կրթեալ ի մամուլ վարժարանի և ի յոյն կենդանի: Որ և ձեզ յիշողացդ և մեղ յուսողացս առ հասարակ ողորմեսցի բարերար և բազումողորմ մարդասէրն Աստուած և Տէրն մեր Յիսուս Քրիստոս, ամէն:

Այլ և գերջանիկ գաղափարօղսդ մաղթեմ. որք ընդորինակէք Զգիր հարցմանցս այսորիկ. զրել և զսակաւ յիշատակս այսոցիկ: Որպէս զի և գուք լիշիք գրեալ ի գիրն կենդանեաց ամէն:

«Գրք Հարցմանց»-ի հիշատակարանն անմիշապես վերջ գործին կցված է «Հարցմունք Գէորգ վարդապետի. և լուծմունք Գրիգորին հորին հարազատի» Հարցումներու շարքը: Այդ 14 Հարցումները առհասարակ իմաստասիրական և աստվածաբանական բնույթ կկրեն: Այսպես՝ մեռելոց հարության, նախամարդուն դրախտեն արտաքսման, աշխարհի կազմության և այլ սուրբգրական շփոթ մնացած հարցերու վերաբերյալ:

Սակայն 14 Հարցումներուն պատասխաննեն են ետք, Տաթևացի կանդրադառնա իր ժամանակաշրջանին, որ արհավիրքի շրջան մը եղած է: Տաթևացի կգրե Գէորգ վարդապետին, «Պետք եղած շափով շկրցա գոհացնել ձեր հարցասիրությունը, նախ՝ տկար արտահյուսությանս պատճառավ, զոր ստիպվեցա պարզաբանել ձեր եղբայրության խնդրանքին վրա». «Եւ այս ի խոռվութեան ժամու և յանձուկ տեղուց: Յորում պաշարեալք ի հինից նետողաց կրկին յարուցեալ Խորազմ անուանեալ աղգաց: Զոր և անբաւ բազմութեամբ ասպատակեալ ասերեաց զաշխարհս Հայոց, Պարսից, Վրաց և զամենայն արևելեայս:

Ոմանք ի գերութիւն վարեալք արք և կանայք եւ կէսք առաջուր դիաթաւալ սրախողիող գալարեալ: Առհասարակ քահանայք և աշխարհականք գէշ անկեալ դիակամբ անթաղ ընկեցեալք: Եւ այլք ի բազմազան տանջարանս մաշեալք:

Ոմանք հրոյ կիսայրեաց տոշորեալք, և այլք ի սովոյ գազանաբեկ վտանգեալք: Կէսք խստամբեր կրիւք շարշարեալք. և այլք երկիւղիւ պակուցեալք: Որ և մեր նստելոյ իբր ի մետաղս կամաւոր դիպահոչ՝ Շահապօնս կոչեցեալ ամրոցի: Ու ինչ ընդհատ

բերելով ի մեզ գորինակ մեծի սաստկասարուուն ատենի»³⁴:

«...յաւուր նոր կիրակի ասացեալն Կրկնոյ Զատկի, յանկարծահաս ժամու շարժեալ հեղեղաց ուղխից խոռվութեանց: Սաստկագին գոշմամբ և ահագնատեսիլ սուաերամերկ կորովալից նետողաց. որ պատեալ պահեալ պաշարէին զմեզ: Ասացեալն նմանապէս և սատ կատարեալ. ոչ միայն յանդ ի հեռատան, կամ աղալ յերկան: Այլ և ի դրան կլայիս սակաւ ինչ դանդաղեալ, մինն փըրկեալ և միան գերեալ էր և տեսանել աստ աղիողորմ տեսիլ. միայն արտասուալի դիմօք և կականաբարձ հառաջմամբ. ազգք և սիրելիք. ծնողք և եղարքք»³⁵:

Այս բոլորին կհաջորդե սովոր և շատերու մահվան պատճառ կդառնա:

«Եւ այս աղէտ անզերծ տարակուակց շըրշապատեալ զմեզ շրջագայութեամբ տօմարի Հայկացեան սեռից, հարիկից կրկնակի քառից և վեցեակ վեցից»:

«Եւ այսպես,— կզր Տաթևացի, — տրտմեալ սովոր և թախեալ մտօք ընծայեցի տղիսեղծ մատամբ. զխունախոյ նուէրս բանի, իր զլոմայս այրույն՝ քոմդ գանձարանի»³⁶:

«Գիրք հարցմանց»-ը կրաղկանա տասը հատորներե, որոնց պարունակությունը հետեւալն է:

«Եւ այսպես, — կզր Տաթևացի, — տրտմեալ սովոր և թախեալ մտօք ընծայեցի տղիսեղծ մատամբ. զխունախոյ նուէրս բանի, իր զլոմայս այրույն՝ քոմդ գանձարանի»:

Երկրորդն՝ Ընդդէմ Արիսոի և Հոգեմարտիցն և նեստորի և երկարնակացն:

Երրորդն՝ Տշմարիտ աստուածաբանութեան Դիոնիսի՝ ցուցումն սակաւուր:

Չորրորդն՝ Վասն վեցօրէից և արարշութեան բոլոր աշխարհի:

Հինգերորդն՝ ի կազմովենէ լինելութեան մարդոյն:

Վեցերորդն՝ ի նոյն յարարածոց սկզբանէ ըստ կարգի պատմութեան և գրոցն Մովսէսի:

Եօթներորդն՝ Ցեսու և դատաւորք և Դ թագաւորութեանցն համառօտեալ:

Ութերորդն՝ ի նոր Կտակաց³⁷ մարդեղութեան բանին Աստուծոյ:

Իններորդն՝ ի նորս Եկեղեցւոյ հարցմունք զանազանք:

Տասներորդն՝ Վասն փոփոխման մարդոյս և կատարածի աշխարհի: Յարութեան և Դատաստանին հատուցման»³⁸:

«Գիրք հարցմանց»-ի վերջում, որի վերնագիրն է «Հարցմունք Դէորդ վարդապետի և լուծմունք Գրիգորի նորին հարազատի», երեվում է, որ Տաթևացին մանրամասն պատասխանել է նաև Հովհաննես Որոտնեցու աշակերտ Գևորգ վարդապետ Երզնկացու տարրեր բնույթի 14 հարցերին, 1387 թվականին:

Տասը տարի հետո, 1397-ին, «գրեցաւ ծաղկազարդ, և վարդապետի թի, մարդարտաշար» Մեծ հացմանց գիրքը Ատում անունով մեկու մը խնդրանքով, որ կանխահաս մահ մը ունենալով, շկրցավ վայելել Հարցմանց գիրքը:

Մելքիսեդ անունով մեկը Տաթևացիի կենդանության իսկ կընդօրինակե սույն գիրքը 1401—1407-ին և այդ առթիվ տաղաշափյալ կդրեւ:

«Ի յութ հարիւր Հայոց թուական եւ յիսներորդ սկսեալ նոր ամ, Գիրքս գրեցաւ այս հրաշազան Հարցարանում և պատասխան. Ի մեծ հոնտոր վարդապետէ Գրիգոր անուն և հսկողէ. Այն որ զանձառս խորոց յայտնէ, Ճաշակ մըտաց մատուցանէ: Շինեաց գիրքս զայս պիտանի, Որ զամենայն իմաստս ունի»:

1720-ին, Աստապատցի Պետրոս աստվածաբան մեծ վարդապետը որպես նվիրակ Սէջմիածնեն Կոստանդնուպոլիս կուգա, և կիափագի «Գիրք Հարցմանց»-ը տպագրեւ: Հազիվ քանի մը պրակ տպագրած, գործը կիսատ կմնա և թիւ վերջ կվախճանի գիտնական ու բարեկրոն վարդապետը էջմիածնի մեջ: Գործի տպագրությունը հանձն կառնեն մահտեսի պարոն Շահնազար Արևելցին և տիրացու Մովսեսը՝ որդի Բյուզանդացի Խոճա Դանիելին, կավարտեն տպագրությունը 1729 մայիսին: Տպագրողը եղած է Կոստանդնուպոլսեցի Աստվածատուր մահտեսին, որդի Խոճա Կարապետին:

Տպագրողին կողմե այսպես մակագրված է «Գիրք հարցմանց»-ի սկիզբը.

«Մեծի հօրն Սրբոյ երանելոյն Ցոհաննու Որոտնեցու՝ աստուածուաոյց աշակերտի, և պարգևին Լուսաւորչի, Սրբոյն Գրիգորի Տաթևացոյ, աստուածաբան վարդապետի բուն իմաստասիրի և խստակօն ճգնատորի արարեալ զուկր Գիրս հարցմանց ի հերքումն աղանդից ամենայն հարձուածողաց: Եւ ի լու-

38 Պետք է ըլլա «Հարցմանց»:

³⁴ Գրիգոր Տաթևացի, «Գիրք հարցմանց», Կոստանդնուպոլիս, 1729, էջ 788ր:

³⁵ Անդ՝ էջ 789ա:

³⁶ Անդ՝ էջ 789բ:

³⁷ Պետք է ըլլա «Կտակարանաց»:

ծումն բազմագան բանից ճշմարտութեան ի փառս միոյն Աստուծոյ և յօգուտ ուղղափառ մանկանց Կաթոլիկէ Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյն Քրիստոսի»:

Լատին Եկեղեցվո համար ինչ արժեք ո՞ր ունի Թովմաս Ագվինացիի Somme théologique-ը, նույն արժեքը ունի նաև «Գիրք Հարցմանց»-ը Հայաստանյաց Եկեղեցվո համար: Այս մեծ գործին համար բաված է. «բազմաւան բանից լուծումն նրբին և եղծումն այլնայլ պազար և աղանդից և հերձումն ամենայն հերձուածողաց շարափառաց ի փառս ճշմարտութեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ և յօգուտ ուղղափառաց մանկանց Կաթոլիկէ Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյն Քրիստոսի»:

Ըստ Օրմանյանի՝ «Տաթկացին անկասկած պետք է դասել ժամանակին գիտնականներուն շարքը: «Հարցմանց գիրք»-ը թե՛ ոճով և թե՛ պարունակությամբ համահավասար կերպարան և արժեք ունի միջին դարու հըռշակավոր լատին աստվածաբաններուն, Թովմաս Ագվինացիի³⁹, Ալբերտոս Սվաբեցիի⁴⁰ և Սկովտոս Երինացիի⁴¹ գործերուն հետ, հան-

³⁹ ԺԴ դարու ամենամեծ գիտնականն ու աստվածաբանը:

⁴⁰ ԺԴ դարու սբոլաստիկ գիտուի և աստվածաբան:

⁴¹ Թ դարու սբոլաստիկ դպրոցի հիմնադիրներին մեկը:

գիտակշիռ առավելություններով և համանկան թերություններով: Ասկե կհնտևցնենք, թե ոչ միայն լատիններենի հմտությամբ, այլև լատիններուն ընդունած ձևերով ուզած է մարտիրի անոնց դեմ: Մինչև իսկ կրնանք պալցնել, թե Հարցմանց գիրքին մթին բացատրությունները կրնան լուսաբանվիլ Սկովտակայաններուն լատիններեն դարձվածներուն համեմատությամբ⁴²:

Հումկու միտք մըն էր ամենայն հայոց վարդապետը, նուրբ տրամարանող մը, հոռագիտու ատենաբան մը, համոզված ու հավատացյալ հոգևորական մը, լուրջ մտավորական մը: Իր յուրաքանչյուր խոսքին, գրքածքին, գործին, պատճառաբանության մեջ ներկա է ինք, յուրահատուկ շեշտով մը, շեշտ մը, որ ապրեացիական է: Ըստ Մեծոփեցիի՝ Գրիգոր Տաթկացին, երկրորդ աստվածաբան, Հովհան Պոկերեանն էր մեր ժողովուրդին: Ան, անդադր ուսուցանելով, կլուսավորե Հայաստանյաց Եկեղեցին և կմնա «շահ լուսատու ի մէջ եկեղեցւոյ»:

Գրիգոր Տաթկացին հոշակավոր Տաթկայան դպրոցի անխորտակելի սյուներեն մեկն է: Տաթկի Գավազան սյունի կողքին ինքն ալ ուրիշ սյուն մըն է, հավերժական կոթող մը հայ մատենագրության անդաստանին մեջ:

⁴² Մազաքիա արմեսիսկապոս Օրմանյան, «Աղքապատում», Բ հատ., էջ 2029:

